



**Կարգապահական գործ թիվ 20014**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի  
2020 թվականի նոյեմբերի 17-ի թիվ 116-րդ ԿԳ նիստի

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ԹԻՎ ԿԳ/84-Ա**

**ՓԱՍՏԱԲԱՆ ԼԻԴԱ ՀԱԿՈՔՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ  
ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀՀ փաստաբանների պալատի (**այսուհետ՝ նաև Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ խորհուրդ**), նիստը նախագահող՝ խորհրդի անդամ Կարապետ Աղաջանյանի, խորհրդի անդամներ՝ Հրանտ Անանյանի, Կարեն Մեժլումյանի, Կարեն Սարգարյանի, Գայանե Դեմիրջյանի և Հարություն Հարությունյանի, քարտուղարությամբ՝ Աստղիկ Գևորգյանի, քննության առնելով փաստաբան Լիդա Հակոբյանին (արտոնագիր՝ 1038) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

**Պ Ա Ր Ձ Ե Ց՝**

**1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.**

Արմինե Մինասյանը (**այսուհետ՝ նաև Դիմող**), դիմելով Պալատ, հայտնել է, որ 10.05.2019թ-ին դիմել է փաստաբան Լիդա Հակոբյանին (**այսուհետ՝ նաև փաստաբան**), ամուսնալուծության և երեխաների բնակության վայրի սահմանման հարցերով: Դիմողի և Լիդա Հակոբյանի միջև 10.05.2019-ին և 22.05.2020թ-ին կնքվել է փաստաբանական ծառայություն մատուցելու վերաբերյալ պայմանագիր և փաստաբանական ծառայություն մատուցելու վերաբերյալ պայմանագրի լրացում, և Դիմողը Լիդա Հակոբյանին վճարել է 210.000 ՀՀ դրամ:

Լիդա Հակոբյանը Դիմողին հավաստիացրել է, որ ամուսնալուծության գործը կավարտվի 2-3 ամսում, սակայն 16.06.2020թ-ի դրությամբ դատարանում գործը չի ավարտվել:

Դիմողի պնդմամբ ինքը չի կարողանում կապ հաստատել Լիդա Հակոբյանի հետ, 2020թ-ի մարտ ամսին Դիմողի զանգերին փաստաբանը չի պատասխանել, Դիմողին հայտնի փաստաբանի երկու հեռախոսահամարներն անջատված են, իսկ գրասենյակի գտնվելու վայրը փոխվել է: Լիդա Հակոբյանը ևս Դիմողի հետ կապ չի հաստատել:

Դիմողը նաև հավելել է, որ դատական նիստերը նշանակվում են, սակայն չեն կայանում, որի մասին ինքն է տեղեկանում՝ զանգահարելով դատարան:

Դիմումին կից ներկայացվել են փաստաբանական ծառայություն մատուցելու վերաբերյալ պայմանագրի և փաստաբանական ծառայություն մատուցելու վերաբերյալ պայմանագրի լրացման պատճենները, լիազորագրի, դրամարկղային մուտքի օրդերի և Դիմողի անձնագրի պատճենները:

## **2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.**

Պալատի նախագահի 09.07.2020թ. թիվ 122-Ա/ԿԳ-20014 որոշման հիման վրա Փաստաբանի նկատմամբ «Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետ՝ նաև Օրենք**) 19-րդ հոդվածի 2-րդ կետի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ նաև Կանոնագիրք**) 3.6.1 և 3.6.3 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

09.07.2020թ-ին կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է փաստաբան Նարինե Սարգսյանին (**այսուհետ՝ նաև Նախապատրաստող**):

## **3. Դիմողի և Փաստաբանի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.**

### **3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.**

Կարգապահական գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը բացատրություն չի ներկայացրել:

Դիմողը չի ներկայացել կարգապահական նիստին, սակայն ուղարկել է դիմում, որը հրապարակվել է կարգապահական նիստի ընթացքում: Համաձայն վերոնշյալ դիմումի վերջինս հրաժարվում է փաստաբան Լիդա Հակոբյանի դեմ ներկայացված բողոքից:

### **3.2. Փաստաբանի համառոտ բացատրությունները.**

Փաստաբանը ներկայացել է կարգապահական նիստին և հայտնել, որ պատշաճ կերպով իրականացրել է Դիմողի շահերի պաշտպանություն և այժմ էլ շարունակում է ներկայացնել վերջինիս շահերը: Դիմողը կնքել է փաստաբանի հետ պայմանագիր և պայմանագրի լրացում: Պայմանագրի լրացումից Դիմողը հրաժարվել է, ուստի պայմանավորվածության համաձայն վերջիններս կնքել են վերոնշյալ պայմանագրի լրացումը լուծելու վերաբերյալ համաձայնագիր և փաստաբանը վերադարձրել է սահմանված գումարը, իսկ մյուս պայմանագրի շրջանակներում վերջինս շարունակում է իրականացնել Դիմողի շահերի պաշտպանությունը:

Փաստաբանը նաև նշել է, որ ինքը ներկայացել է գործով դատական մեկ նիստի Դիմողի հետ, հաջորդ դատական նիստը հետաձգվել է դատավորի անաշխատունակության մեջ գտնվելու պատճառով, հաջորդ նիստը հետաձգվել է քանի որ

վերջինս ծանուցված չի եղել և միևնույն ժամանակ ունեցել է ևս մեկ դատական նիստ նույն ժամին:

Փաստաբանը նաև հայտնել է, որ Դիմողին դատական գործի ավարտի հետ կապված ոչ մի ժամկետ չի նշել, այլ միայն ասել է, որ վճռի կայացումից մեկ ամիս անց այն կմտնի ուժի մեջ և այնուհետև ևս մեկ ամսվա ընթացքում ամուսնալուծության վկայական կստանան:

### **3.3. Վկաների ցուցումները.**

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

### **4. Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.**

Կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Նախապատրաստողը 08.09.2020թ. կազմել է եզրակացություն:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ կողմերն առարկություն չեն ներկայացրել:

14.09.2020թ.-ին կարգապահական գործը հանձնվել է խորհրդին:

### **5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.**

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

**խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում գործի համար նշանակություն ունեցող հետևյալ փաստերը.**

1. Փաստաբանը Դիմողին է վերադարձրել պայմանագրի լրացումով սահմանված 90.000 դրամ գումարը: Սույն փաստը հաստատվում է 16.07.2020թ. և 28.09.2020թ. ստացականով:

2. Դիմողը Պալատ է ներկայացրել դիմում, որով հրաժարվել է փաստաբանի դեմ ներկայացված բողոքից: Սույն փաստը հաստատվում է 06.10.2020թ. ներկայացված դիմումով:

### **6. Փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները.**

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Լիդա Հակոբյանի (արտոնագիր 1038, ստացված՝ 16.10.2010թ.)

նկատմամբ 2015-2020թթ. ընկած ժամանակահատվածում 4 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (չորս ավարտված վարույթ), չհաշված սույն կարգապահական գործը:

Խորհրդի 06.03.2018թ. թիվ ԿԳ/45-Ա որոշմամբ Լիդա Հակոբյանը ենթարկվել է կարգապահական տույժի՝ նկատողության և լրացուցիչ տույժի՝ իր հաշվին 4 ակադեմիական ժամ ժամաքանակով լրացուցիչ վերապատրաստման դասընթացների մասնակցության «Դեոնթոլոգիա» թեմայով, Կանոնագրքի 2.6.1, 2.7.2, 3.1.8, 3.5.5, 3.6.1 ենթակետերի խախտման համար: Տույժը մարված է, լրացուցիչ տույժը մարված չէ:

Խորհրդի 23.10.2018թ. թիվ ԿԳ/209-Ա որոշմամբ Լիդա Հակոբյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճվել է:

Խորհրդի 23.10.2018թ. թիվ ԿԳ/209-Ա որոշմամբ Լիդա Հակոբյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճվել է:

Խորհրդի 26.11.2019թ. թիվ ԿԳ/159-Ա որոշմամբ Լիդա Հակոբյանը ենթարկվել է «նկատողության» կարգապահական տույժի՝ Կանոնագրքի 2.7.2, 3.1.8, 3.5.5, 3.6.1 ենթակետերի խախտման համար: Տույժը մարված է:

## **7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.**

Խորհուրդը, լսելով Դիմողի և փաստաբանի բացատրությունները և ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, գտնում է, որ Կանոնագրքի 3.6.1 և 3.6.3 ենթակետերի խախտման հատկանիշներով փաստաբան Լիդա Հակոբյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ:

\*\*\*\*\*

### **➤ Կանոնագրքի 3.6.1 և 3.6.3 ենթակետերի խախտման մասով**

**Կանոնագրքի 3.6.1 ենթակետի համաձայն՝** փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:

**Կանոնագրքի 3.6.3 ենթակետի համաձայն՝** Իր գործունեության հասցեն կամ հեռախոսահամարը փոխելու դեպքում, փաստաբանը պարտավոր է վստահորդներին, ինչպես նաև Պալատին, ողջամիտ ժամկետում տեղեկացնել իր հասցեի կամ հեռախոսահամարի մասին:

Կանոնագրքի 3.6.1 և 3.6.3 ենթակետը հստակ սահմանում է փաստաբանի պարտականությունը կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին, պատասխանել նրան հետաքրքրող հարցերին, իսկ հասցեի կամ հեռախոսահամարի փոփոխության դեպքում՝ այդ մասին տեղեկացնել նաև վստահորդին:

Վերը նշված կանոններից բխում է, որ փաստաբանը ոչ միայն կրում են վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալու, այլ նաև տրամադրված

օգնության կամ գործի ընթացքի մասին վերջիններիս տեղեկացնելու և վստահորդի հետ մշտական կապ պահելու պարտականություն:

Սույն պարագայում հաստատված չի համարվում այն փաստը, որ փաստաբանը չի պատասխանել Դիմողի հեռախոսազանգերին և չի տրամադրել տեղեկություններ գործի ընթացքի մասին, փոփոխել է իր հեռախոսահամարը և հասցեն առանց այդ մասին վստահորդին տեղեկացնելու:

Դիմողը չի ներկայացրել բացատրություն կարգապահական գործի նախապատրաստման փուլում, չի ներկայացրել խորհրդի նիստերին և որևէ կերպ չի հիմնավորել 10.05.2019թ. դիմումով ներկայացրած իր պնդումները: **Ավելին՝ վերջինս 06.10.2020թ.-ին դիմում է ներկայացրել Պալատ, որով հրաժարվել է փաստաբանի դեմ ներկայացրած բողոքից:**

**Կարգի 15-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝** եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Կարգի վերոնշյալ իրավադրոյթներից հետևում է, որ դիմողը պարտավոր է ներկայացնել այնպիսի ապացույցներ, որոնք խորհրդի մոտ կարող են ձևավորել ողջամիտ համոզմունք, որ դիմումում նշված փաստական հանգամանքներն իրականում տեղի են ունեցել, և առկա է կարգապահական գործով պատասխանող փաստաբանի կողմից թույլ տրված՝ Օրենքով և Կանոնագրքով արգելված արարք: Եթե դիմողը չի կատարում իր նշյալ պարտականությունը, ապա ինքն է կրում դրա բացասական հետևանքը:

Խորհուրդն արձանագրում է, որ Դիմողի կողմից չեն ներկայացվել բավարար ապացույցներ, որոնք կարող էին վկայել Պատասխանողի կողմից Կանոնագրքի 3.6.1 և 3.6.3 ենթակետերի խախտման մասին:

**Նկատի ունենալով, որ նշված փաստերը չեն հաստատվել, ինչպես նաև հաշվի առնելով Դիմողի կողմից 06.10.2020թ. ներկայացված դիմումը, Խորհուրդը փաստաբանի վարքագիծը չի համարում Կանոնագրքի 3.6.1 և 3.6.3 ենթակետերին հակասող, ուստի սույն ենթակետերի խախտման հիմքով Փաստաբանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման:**

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի, 39-րդ հոդվածի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի 6.1.1 (2) ենթակետի պահանջներով՝ Խորհուրդը

## **Ո Ր Ո Շ Ե Ց՝**

**1. Փաստաբան Լիդա Հակոբյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը, կարճել:**

**2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:**

**Ծանոթություն.** Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի  
խորհրդի նախագահող անդամ

Կարապետ Աղաջանյան

**17 նոյեմբեր 2020թ.  
թիվ ԿԳ/84-Ա  
ք. Երևան**